

Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարազյանի հաշվետվությունը 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Արթիկ համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի ձևավորման, կատարման, վերահսկման և հաշվետվության ներկայացման հետ կապված գործունեությունը բացահայտում է տվյալ տարվա ընթացքում համայնքային ինքնակառավարման մարմինների կողմից տարվող քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները՝ ամբողջացնելով համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը: 2019 թվականի համայնքային բյուջեն կազմվել է՝ հաշվի առնելով

իմ նախընտրական ծրագիրը, համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի դրույթները, համայնքային առանձնահատկություններն ու առաջնահերթությունները, բյուջետային հնարավորությունները, առկա ռեսուրսները:

Բյուջեի սահմանափակ միջոցները համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ծրագրերը ֆինանսավորելու համար բաշխվել են այնպես, որ հնարավորինս արդյունավետ բավարարեն համայնքի հանրության կարիքներն ու պահանջները: Հաշվետվության մեջ ներկայացված են տարվա ընթացքում համայնքի ղեկավարի լիազորությունների ուղղությամբ կատարված ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները:

Արթիկ համայնքում 2019 թվականին գերակա են համարվել՝


1. Համայնքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը
2. Նախակրթական, մշակութային և սպորտային համայնքային կազմակերպությունների շարունակական աշխատանքների կազմակերպումն ու հիմնախնդիրների լուծումը
3. Ներհամայնքային փողոցների ու նրբանցքներ նորոգումը
4. Փողոցային լուսավորության ցանցի արդիականացումն ու ծայրամասային թաղամասերի լուսավորության ապահովումը
5. Համայնքում աղբահանության և սանմաքրման անխափան կազմակերպումը
6. Համայնքի բնակչության համար մշակութային և սպորտային բազմաբովանդակ միջոցառումների անցկացումը

Համայնքային բյուջե

Համայնքային յուրաքանչյուր ծրագրի և նախաձեռնության հիմքում բյուջետային գործընթացի համակարգված կազմակերպումն է: 2019թ. սեփական եկամուտների տարեկան պլանը նախատեսված էր 164 874 100

ՀՀ դրամ, փաստացի կատարվել է 162 154 100 ՀՀ դրամ /98.4%/:

Արթիկ համայնքի 2019 թ. վարչական բյուջեի համամասնությունը ըստ եկամտատեսակների (պլանային ցուցանիշներ)



Համայնքի բյուջեի կատարումը 30.12.2019թ. դրությամբ և համեմատականը Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ

Հ/Հ	30.12.2019թ-ի դրությամբ ՀՀ դրությամբ ՀՀ	30.12.2018թ-ի դրությամբ ՀՀ	Տարբերությունը	Տոկոս /ավել/

		դրամ /փաստացի/	դրամ /փաստացի/	+/-	
1	Համայնքի բյուջե	598 567 400	542 486 500	+56 080 900	110.3
ա/թ	վարչական	545 416 000	508 582 000	+3 683 400	107.2
	ֆոնդային	53 151 400	33 904 500	+19 246 900	156.8
2	Սեփական եկամուտներ	162 154 100	151 920 800	+10 233 300	106.7

Հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ:

Համայնքային եկամուտների մեջ գույքահարկի գծով տարեկան պլանը նախատեսված է եղել 66 500 000 ՀՀ դրամ, հավաքագրումն կազմել է 65 932 300 ՀՀ դրամ /99.1%:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 3 800 000 ՀՀ դրամ: Հավաքագրվել է 3 903 400 ՀՀ դրամ /102.7%: Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 12 580 300 ՀՀ դրամի դիմաց կատարողականը կազմում է 13 051 300 ՀՀ դրամ /103,7%:

Պետական տուրքի գծով նախատեսված 6 800 000ՀՀ դրամի դիմաց մուտքագրվել է 7 545 800 հազ ՀՀ դրամ /111%:

Այլ եկամուտներ /հողի վարձավճար, ԲԿԱԳ ծառայություններ, տարածքների վարձակալություն և այլն/ պլանային 7 724 400 ՀՀ դրամից հավաքագրումը կազմել է 7 378 020 ՀՀ դրամ /95,5%: Բաղաքացիների հարկային պարտավորությունները չկատարելու համար հարուցվել է 3 բռնագանձման վարույթ 526 100 ՀՀ դրամ:

Քաղաքաշինություն

Քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական բաժնի կողմից տրամադրված ամփոփ տեղեկագիրն էլ արձանագրում է հետևյալը. 2019 թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին աճուրդային կարգով օտարվել է 756.65 քմ մակերեսով հողատարածք, որից համայնքային բյուջե է մուտքագրվել 376 331 ՀՀ դրամ:

Հասցեի տրամադրման և վերահասցեաորման թույլտվությունների համար համայնքի բյուջե է մուտքագրվել 594 000 ՀՀ դրամ: Տրվել է ճարտարապետահատակագծային՝ 20 առաջադրանք, 18 շինարարական

թույլտվություն, որի համար համայնքի բյուջե է մուտքագրվել 1 327 500 ՀՀ դրամ: 2019թ. կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 7 գործ: 500 000 ՀՀ դրամ մուտքագրվել է համայնքի բյուջե:

Ներքին աուդիտ

Իմ հանձնարարությամբ 2019թ-ին ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է աուդիտ՝ ֆինանսական կառավարման համակարգերի և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության համակարգերի մանրակրկիտ գնահատելու՝ դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով: 2019թ-ի տարեկան ծրագրում պլանավորվել և իրականացնել է ներքին աուդիտ համայնքապատկան <<Արթիկի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում, <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> ՀՈԱԿ-ում, <<Արթիկի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում, Արթիկի համայնքապետարանի քարտուղարության բաժնում, Արթիկի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և հանրային կապերի բաժնում, Արթիկի ՔԿԱԳ ստորաբաժանումում, ուսումնասիրվել է գնումների գործընթացի 26 պայմանագիր: Վերոնշյալ միավորներում իրականացված ներքին աուդիտի արդյունքները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի նիստերում, միավորների ղեկավարներին տրվել են խախտումների, թերությունների ու բացթողումների ուղղման հանձնարարականներ, իրականացվել է դրանց վերստուգման գործընթացը:

2019 թվականին իմ կողմից հանձնարարվել է ներքին աուդիտի բաժնի մասնագետներին կատարել այցելություններ ենթակա հիմնարկներ՝ ուսումնասիրելու տվյալ պահին իրականացվող աշխատանքների համապատասխանությունը, կազմակերպությունների ղեկավարներին տրվել է իրենց հուզող հարցերի խարհրդատվության ծառայություններ:

Առևտրի և սպասարկման բնագավառ

Հեղուկ վառելիքի վաճառքի համար տրվել է 8 թույլտվություն՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 1 600 000 ՀՀ դրամ: Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկի վաճառքի իրականացման համար տրվել է 10 թույլտվություն՝ համայնքային բյուջե մուտքագրելով 285 500 ՀՀ դրամ:

Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար տրվել է թվով 18 թույլտվություն՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 445 000 ՀՀ դրամ:

Ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի իրականացման համար տրվել է թվով 105 թույլտվություն՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 4 718 000 ՀՀ դրամ, արտաքին գովազդ տեղադրելու համար կնքվել է թվով 89 պայմանագիր՝ 3 085 800 ՀՀ դրամ մուտքագրվել է համայնքի բյուջե:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի համար տրվել է 10

թույլտվություն՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 462 500 ՀՀ դրամ:

Բացօթյա առևտրի իրականացման համար տրվել է թվով 7 թույլտվություն՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 536 000 ՀՀ դրամ:

Քաղաքային տնտեսություն

Համայնքի համար կենսական նշանակություն ունի քաղաքային տնտեսության բնականոն գործունեությունը: Քաղաքային տնտեսության ոլորտի գործառույթներն են՝ կանաչապատում, բարեկարգում, շրջակա միջավայրի պաշտպանություն, լուսավորության ցանցի գործարկում:

Ճանապարհների պահպանության, զարգացման և համայնքում քաղաքային տրանսպորտի ապահովման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Քաղաքային ավտոբուսի ծառայություն 1 199 800 ՀՀ դրամ
Համայնքում գործող քաղաքային միկրոավտոբուսը կատարել է տարեկան 189 երթ՝ ուղևորափոխադրելով դպրոցների և նախակրթարանների մանկավարժների և աշխատակիցների, աշակերտների, պետական հիմնարկների աշխատողների:
2. Ճանապարհների կահավորում ճանապարհային նշաններով, փողոցային գծանշումներով 1 430 000 ՀՀ դրամ:
3. Ճանապարհների ընթացիկ նորոգում և բարեկարգում:
2019 թվականին համայնքի գլխավոր փողոցներում իրականացվել է ասֆալտբետոնե ծածկույթի խճային հիմքով փոսային նորոգման աշխատանքներ 2323 քմ 17 285 300 ՀՀ դրամ արժողությամբ:
4. Ճանապարհների կապիտալ նորոգում:
 1. <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման>> ծրագրի շրջանակներում Արթիկի Բաղրամյան և Գորկու փողոցների միջև հետիոտն անցումի տուՖ քարով սալապատում է իրականացվել: Ծրագրով անանցանելի դարձած բանուկ նրբանցքի 300 մ երկարությամբ և 600 քմ ընդհանուր մակերեսով տարածքը բարեկարգվեց և սալահատակվեց, կառուցվեց 6 մ լայնությամբ և 2.2 մ բարձրությամբ փլված հենապատը, տեղադրվեցին 2 նոր բազրիքներ: 721 400 ՀՀ դրամ Արթիկի համայնքապետարանի կատարած ներդրումն է, իսկ 1 430 000 ՀՀ դրամը՝ Արթիկի ՉՏԿ-ի:
 2. <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման>> ծրագրով բարեկարգվել ու սալահատակվել է Արթիկի Գրիգոր Լուսավորիչ 2-րդ նրբանցքի 200 մ երկարությամբ և 700քմ ընդհանուր մակերեսով տարածքը: 1 247 500 հազ ՀՀ դրամը համայնքի ներդրումն է, իսկ 1 485 000 հազ ՀՀ դրամը՝ Արթիկի ՉՏԿ-ի:
 3. Ճանապարհների հիմնանորոգման ծրագրի հետ կապված պատվիրվել են նախագծահետազոտական ծառայություններ՝ 1 520 000 ՀՀ դրամ: Շուրջ 3000 բնակչի սպասարկող Արթիկի Շինարարների փողոցի հիմնանորոգումն համար հարցը մեր կողմից ներկայացվեց ՀՀ կառավարություն, որտեղ կարճ ժամանակ անց որոշում կայացվեց 97 927 000 ՀՀ դրամ տրամադրել փողոցի նորոգման համար: 2019-ին Արթիկի համայնքապետարանի կողմից պատվիրվել է Շինարարների փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի փաթեթը 1 200 000 ՀՀ դրամ:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Համայնքային տարածքների մաքրման համար համայնքային բյուջեից ուղղվել է 33 868 000 ՀՀ դրամ:

Այս ոլորտում աշխատանքների առանցքում է եղել աղբահանության ոլորտի կարգավորումը՝ պայմանագրերի կնքումից մինչև հավաքագրումների կանոնակարգում:

Արթիկ համայնքում 2019 թ. աղբահանության պայմանագրերի կնքման և աղբահանության դիմաց վճարների հավաքագրումները ներկայացնում են հետևյալ պատկերը.

2019 թ. աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի քանակը կազմել է 250 հատ, հավաքագրումները կազմել են 21 853 400 ՀՀ դրամ, որից՝ բնակչություն՝ 8 467 100 ՀՀ դրամ, կազմակերպություններ՝ 13 386 300 ՀՀ դրամ:

Համայնքային տարածքների մաքրման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1. Համայնքում կենցաղային աղբի հավաքման ծառայություն
2. Համայնքի փողոցների սանիտարական մաքրման ծառայություն
3. Համայնքի փողոցների երթևեկելի մասերի ճնահեռացման ծառայություն
4. Զաղաքային շաբաթօրյակներ, որոնք անցկացվել են «Մաքուր Հայաստան» և «Մաքուր մոլորակ» համապետական և միջազգային ծրագրերի շրջանակներում:
5. Ներհամայնքային ճանապարհամերձ ծառերի կոճղաշվային էտ, ինչի արդյունքում առաջացած վառելափայտը տրամադրվել է Արթիկ համայնքի անապահով բնակիչներին: Ծրագիրն ուներ սոցիալ-բնապահպանական նշանակություն: Էտի արդյունքում առաջացած փայտը տրամադրվեց Արթիկի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես վառելանյութ, որով մասամբ մեղմվել են ջեռուցման ծախսերը:

Շենքեր և շինություններ

Այն, ինչը հնարավոր չէ կյանքի կոչել միայն տեղական բյուջեի միջոցների հաշվին, դառնում է իրատեսական կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ, ինչի արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների վերանորոգումն ավելի լայնածավալ դարձավ: Այս տեսակետից համայնքում իրականացվող բարեփոխումների, զարգացումների առանցքում կարևորվում են **Ներդրումային ծրագրերը**: Մեր կողմից պարտադիր արձագանք են ստանում ինչպես կարճաժամկետ, միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում Արթիկ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված հանրապետական և միջազգային ցանկացած ծրագրային առաջարկություններ: Տեղական բյուջեի, ինչպես նաև ներդրումների շնորհիվ 2019 թվականին հնարավոր դարձավ իրականացնել համայնքային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ ծրագրերը՝

1. Արթիկ գիշերային լուսավորության ցանցի արդիականացում և ընդլայնում սուբվենցիոն ծրագրը, որի շրջանակներում արդիականացվել և ընդլայնվել է Արթիկ համայնքի գործող գիշերային լուսավորության ցանցը: ՀՀ կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արտաքին լուսավորության շուրջ 8 կմ երկարությամբ ցանց է կառուցվել համայնքի թվով 24 փողոցներում: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 24 480 000 ՀՀ դրամ, որի 60 տոկոսը ներդրել է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը (9 792 000 ՀՀ դրամ)՝ Արթիկի համայնքապետարանը: Ներդրված միջոցներով հնարավոր դարձավ 200 լուսատուներ փոխարինել 60 վատ հզորությամբ էլեկտրախնայող լուսադիոդային լուսատուներով, կառուցել 239 նոր հենասյուներ, որոնք միացվեցին համայնքի գիշերային լուսավորության ընդհանուր ցանցին: Համայնքի շուրջ 750 լուսավորության հենասյուներին ավելացան 239-ը, որով հնարավոր դարձավ Արթիկի գիշերային լուսավորվածությունը հասցնել ավելի քան 80%-ի:

2. Արթիկի թիվ 2 մանկապարտեզի ՀՈԱԿ-ի խնամքի և կրթության պայմանների բարելավում ծրագրը, որի շրջանակներում փոխվել է թիվ 2 մանկապարտեզի տանիքն ամբողջությամբ, հիմնանորոգվել են 3 խմբասենյակների սանհանգույցներ, խմբասենյակների բուժետային մասերը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 10 486 000 ՀՀ դրամ, որից 2 486 000 ՀՀ դրամը համայնքի ներդրումն է, իսկ 8 000 000 ՀՀ դրամը՝ Կարիտաս բարեգործական ՀԿ-ինը:

3. Արթիկի գեղարվեստի դպրոց ՀՈԱԿում փայտե վառարաններով և էլեկտրականությամբ ջեռուցումը փոխարինվել է առանձնացված ջեռուցման համակարգով, տեղադրվել է 1 եվրոպատուհան և 1 եվրոդուռ, իրականացվել են մասնակի կոսմետիկ նորոգման աշխատանքներ: Աշխատանքները կազմել են 3 479 000 ՀՀ դրամ:

4. <<Արթիկի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում նորոգվել է լվացքատունը, կահավորվել նոր լվացքի մեքենայով: Տարհանման դռները փոխարինել եվրոդռներով: Աշխատանքների արժեքը մոտ 1 000 000 ՀՀ դրամ է:

5. <<Արթիկի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի խոհանոցային պայմաններն են բարելավվել: Խոհանոցի 2 հին պատուհաններն ու դռները փոխարինվել են նորերով, նորոգվել են խոհանոցի ջրագծերն ու օդատարը, տեղադրվել լվացարաններ: Ընդհանուր՝ 500 000 ՀՀ դրամ:

6. <<Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի դահլիճի փլված առաստաղը փոխարինվել է կախովի առաստաղով: Դահլիճում կատարվել են նաև այլ մասնակի նորոգման աշխատանքներ: Ընդհանուր՝ 500 000 ՀՀ դրամ:

7. <<Արթիկի մարզահամալիր>> ՀՈԱԿ-ում մարզադահլիճի փթած փայտե հատակը բետոնե ծածկույթով է փոխարինվել: <<Աջակցություն Հայաստան>> բարեգործական կազմակերպության և տեղի կամավորների օգնությամբ 2020 թվականի մարտ ամսին նախատեսվում է ավարտին հասցնել մարզադպրոցի դահլիճի, նախամուտքի հատակի նորոգումը: Բետոնապատման համար համայնքապետարանը հատկացրել է 1 200 000 ՀՀ դրամ:

8. <<Արթիկի գրադարան>> ՀՈԱԿ-ում կատարվել են ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ, 3 պատուհան փոխարինվել է եվրոպատուհանով, 1 դուռ փոխարինվել է եվրոդռով, ջեռուցման համակարգերի խողովակները

փոխարինվել են նորերով: 2019 թվականին նորոգման աշխատանքների համար ծախսվել է 1 775 000 ՀՀ դրամ:

9. Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ում անցկացվել է ընդհանուր ջեռուցման համակարգ: 2 պատուհաններ փոխարինվել են եվրոպատուհաններով: Աշխատանքների արժեքը՝ 3 680 000 ՀՀ դրամ:

10. Արթիկ համայնքի հասարակական վայրերում օւլայն տեսահսկման համակարգի ներդրման ծրագրով նպատակ ունենք բարձրացնել հասարակական անվտանգությունը, կանխել ու օգնել հանցագործությունների և անկարգությունների բացահայտմանը, հասարակական վայրերում ապահովել համայնքային գույքի պաշտպանությանը: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ օւլայն տեսահսկման 10 տեսախցիկներ են տեղադրվել համայնքի բանուկ մասերում և համայնքի մուտքային ու ելքային ճանապարհների վրա: Ծրագիրն արժեցել է 990 000 ՀՀ դրամ:

11. Բակային խաղամիջոցների տեղադրում՝ 3 բակ 2 057 500 ՀՀ դրամ, խաղահրապարակները բաղկացած են 6 խաղաձևերեց:

12. Շուրջ 3000 բնակչի սպասարկող Արթիկի Շինարարների փողոցի հիմնանորոգումն համար հարցը մեր կողմից ներկայացվեց ՀՀ կառավարություն, որտեղ կարճ ժամանակ անց որոշում կայացվեց 97 927 000 ՀՀ դրամ հատկացնել փողոցի շինարարության համար: 2019-ին Արթիկի համայնքապետարանի կողմից պատվիրվել է փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Շինարարների փողոցն իր վերջնական բարեկարգ տեսքը կստանա 2020 թվականին:

13. Արթիկում կառուցվել է մինիֆուտբոլի մարզադաշտ, որը համաֆինանսավորվում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան 14 800 000 ՀՀ դրամ և Արթիկի համայնքապետարանը՝ 1 700 000 ՀՀ դրամ:

14. Ուրախ տնակ երիտասարդական խորհրդի ջանքերով Արթիկում բացվեց մինի կինոակումբ, որը հիմնվեց Արթիկի ՅՈՒ. Գագարինի անվ. քաղաքային զբոսայգում: Սիրողական ֆոտոստուդիան և մինի կինոակումբը համայնքի երիտասարդներին ծառայելու են որպես համայնքի թույլ և ուժեղ կողմերը սիրողական ֆոտոների և ֆիլմերի միջոցով ուսումնասիրելու և հանրությանը ներկայացնելու մի գործիք: Կինոակումբում կանցկացվեն թեմատիկ քննարկումներ, դասընթացներ, բանավեճեր և այլ միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն համայնքի երիտասարդների ուրախ ժամանցի ապահովմանը, ինտելեկտուալ մակարդակի և իրազեկվածության բարձրացմանը: Ծրագրի կյանքի կոչման համար ներդրումներ են արել <<Օքսեջեն>> հիմնադրամի, <<Սեյվ դը չիլդրեն>> միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և Արթիկի համայնքապետարանը, անհատներ և Արթիկում գործող կազմակերպություններ:

Ներդրումային ծրագրեր, աշխատատեղերի ստեղծում

1. Գրին ֆուդ ընկերությունը Արթիկում ընդլայնեց իր ջերմոցային տնտեսությանը, 3 հա տարածքը հասցնելով 9 հա-ի: Այստեղ աճեցվում է ալպին տեսակի ելակ: Ելակի ջերմոցային տնտեսության ընդլայնմամբ Արթիկում ստեղծվեց ևս 150 աշխատատեղ:

3. «Թուֆենկյան բարեգործական» ՀԿ-ի և «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի համագործակցության արդյունքում Արթիկում կունենանք Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների աջակցման կենտրոն: 16 000 000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրի շրջանակներում 110 քմ տարածք ունեցող Շինարարների փողոց թիվ 7 հասցեում գտնվող շենքը, որը համայնքապատկան է և անհատույց օգտագործման իրավունքով տրվել է այս կազմակերպությանը, հիմնանորոգվում է ամբողջովին: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների աջակցման կենտրոնի բացումը նախատեսված է 2020 թվականի փետրվարի 18-ին: Երեխաների համար ստեղծվել է հարմարավետ և ապահով միջավայր: Նաև նշեմ, որ աջակցման կենտրոնի ստեղծմամբ կապահովվի 7 անձանց զբաղվածությունը:

3. «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ՀՀ կառավարությունը 2019 թվականին իրականացրեց շենքային պայմանների բարելավում ծրագիրը, որի նախագիծ-նախահաշվային փաթեթի կազմումը ֆինանսավորվել է Արթիկի համայնքապետարանի կողմից՝ մոտ 1 մլն ՀՀ դրամ: 2019 թվականին ավարտվեց հիվանդանոցի շենքային պայմանների բարելավման ծրագիրը: ՀՀ կառավարությունը նախատեսում է նաև Արթիկ համայնքում կառուցել նոր բժշկական կենտրոն, քանի որ շինությունը, որում տեղակայված է Արթիկի բժշկական կենտրոն ՓԲԸ-ն, 40-ականների շինություն է և չի համապատասխանում ոլորտի ժամանակակից չափորոշիչներին:

4. 2019 թվականին Արթիկ համայնքում 3-րդ ավագ դպրոցում սկսվեցին կապիտալ նորոգման և մարզադահլիճի կառուցման աշխատանքները: Ավագ դպրոցի շենքի ոչ բարվոք վիճակն արժանացավ կառավարության ուշադրությանը և այն ներառվեց հիմնանորոգման ծրագրերում: ՀՀ պետական բյուջեից 460 մլն. ՀՀ դրամ է հատկացվել ծրագրի իրականացման համար:

Համագործակցություն միջազգային կառույցների հետ

1. Դեռևս երեք տարի առաջ Արթիկ համայնքի համար մեկնարկեց շատ կարևոր՝ «Արթիկ քաղաքի փակված քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում»

դրամաշնորհային պիլոտային» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Հարմարվողականության հիմնադրամի և Կանաչ հիմնադրամի կողմից: Ծրագիրն ունի երեք բաղադրիչ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական գործառնություններ:

Այս ծրագրի իրականացմամբ համայնքի 40 հա տարածք ընդգրկող փակված տուֆքարի հանքերի վրա կստեղծվի անտառաշերտ, որից 10 հա տարածքի վրա կստեղծվի հանգստյան գոտի: 2019-ին իրականացվեց այս դրամաշնորհային ծրագրի բաղադրիչներից մեկի՝ գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը: Ծրագրի այս փուլում նախատեսված էր բարելավել և բարձրացնել հանքավայրերի ազդեցության գոտում գտնվող ավելի քան 300 հա վարելահողերի, 190 հա համայնքամերձ արոտների և 15 հա խոտհարքերի հարմարվողականությունը: ԲԾԻԳ-ը լաբորատոր պայմաններում ուսումնասիրել էր Արթիկ, Վարդաքար, Հառիճ և Նահապետավան համայնքներում ջրհեղեղների և քարհանքերի փոշու ազդեցության գոտում գտնվող դեգրադացված վարելահողերը: Ուսումնասիրությունների արդյունքում Արթիկ համայնքում ընտրվել էին առաջնահերթ բարելավման ենթակա 132 հա տարածք: Սրանք այն տարածքներն էին, որոնք <<վազվել>> էին 2016 թվականի ջրհեղեղից: 132 հա վարելահողերը պարարտացվեցին հանքային (սուլֆերֆոսֆատ՝ 4884 կգ, կալիումական պարարտանյութ՝ 6600 կգ) և հայ-նորվեգական համատեղ ընկերության կողմից արտադրվող նոր՝ օրգանամիքս (132 տոննա) օրգանական պարարտանյութերի զուգակցությամբ, ինչը բացառում է հնարավոր բացասական հետազդեցությունների ձևավորումը շրջակա միջավայրի վրա: Վարելահողերի բերրիության բարձրացումից հետո 2020 թվականի գարնանը նախատեսվում է բարձրացնել արոտների և խոտհարքերի հարմարվողականությունը, կմեկնարկեն շինարարական աշխատանքները:

4. Համայնքում իրականացվում է մեկ այլ կարևոր դրամաշնորհային ծրագրի՝ <<Եվրամիությունը հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի>> ծրագիրը, որի մեկնարկը տրվեց երեք տարի առաջ: «Էներգախնայողության աջակցման հիմնադրամի» և «Համայնքների միություն», «Քաղաքապետերի Դաշնագիր Արևելք» ՀԿ-ների օժանդակությամբ 2020 թվականին կավարտվի վերականգնվող էներգետիկայի խթանման ծրագիրը, որի շրջանակներում կունենանք համակարգային արևային ֆոտովոլտային կայան՝ արտադրված էլեկտրաէներգիան էլեկտրացանցին վաճառելու նպատակով: Ծրագիրը կդառնա համայնքի տնտեսական կայուն զարգացման համար կարևորագույն երաշխիք: Դրամաշնորհային ծրագրի 20 տոկոսը համաֆինանսավել է համայնքային բյուջեից: Ծրագրի ավարտից հետո կմեծանա Արթիկի էներգետիկ անվտանգության մակարդակը, ինչպես նաև 20 %-ով կնվազի համայնքի ածխաթթու գազի (CO₂) արտանետումների ծավալը:

Սոցիալական ոլորտ

Բնակիչները իրենց հոգս ու խնդիրների լուծման համար առաջին հերթին դիմում են համայնքապետարան: Կանոնակարգի համաձայն՝ համայնքի ղեկավարի մոտ ընդունելություն է նախատեսված յուրաքանչյուր հինգշաբթի, սակայն բնակիչների ընդունելություն եղել է շաբաթվա բոլոր աշխատանքային օրերին: 2019-թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին համայնքի ղեկավարի մոտ հերթագրվել և ընդունելության է մասնակցել 708 քաղաքացի:

Քաղաքացիների կողմից բարձրացվել են հիմնականում սոցիալական

Եւանակոթյուն ունեցող ինդիւրներ, որոնց շարքում առանձնահատուկ կարևորոթյուն ունեն սոցիալական օգնոթյան տրամադրումը, բնակչոթյան զբաղվածոթյան ինդրի լուծումը և սոցիալական պայմանների բարելավումը: Վերջին ինդրի լուծման համար մեր մասնակցոթյունը սահմանափակ է ոչ միայն լիազորոթյունների, այլ նաև հնարավորոթյունների բացակայոթյան պատճառով: 1. Սոցիալական լարվածոթյան մեղմացման ուղղված աշխատանքների զգալի մասը ներառում է միանվագ հասցեական դրամական օգնոթյան տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին և մարտական գործողոթյունների ժամանակ վիրավորված ու առաջին, երկրորդ կարգի հաշմանդամոթյուն ձեռք բերած ազատամարտիկներին՝ Մայիսի 9-ի և Ամանորի կապակցոթյամբ:(Ընդհանուր՝ 4 385 000 ՀՀ դրամ):

2. «Առաքելոթյուն Հայաստան» ԲՀԿ - ի հետ համագործակցոթյամբ ստեղծված բարեգործական ճաշարանում սնվում և ծառայոթյուններ են ստանում 100 սոցիալապես անապահով բնակիչներ: Համայնքի ներդրումն այստեղ 2 մլն ՀՀ դրամ է, որն ուղղվում է ծերերին տրվող սննդի որակի բարձրացմանը:

3.Սոցիալական պաշտպանոթյան համակարգերի հզորացման ծրագրի հետ համատեղ ստեղծվել է հաշմանդամների և տարեցների ցերեկային կենտրոն՝ իրավական, սոցիալական, հոգեբանական ծառայոթյունների համար:

4.Սոցիալական բեռը թեթևացնելու ծրագրերից մեկն էլ համայնքի մանկապարտեզներում և մարզամշակոթյալին ենթակառուցվածքներում ծնողական վարձավճարների զեղջերն են 4 955 150 ՀՀ դրամ (386 երեխա): Եւեմ, որ համայնքի մանկապարտեզներ են հաճախում 417 երեխա: Վարձավճարները մեկ երեխայի հաշվով ամսական կազմում է 6000 ՀՀ դրամ: Մանկապարտեզների գործունեոթյան նկատմամբ իրականացվում է մշտական վերահսկողոթյուն, որը ներառում է երեխաների հաճախելիոթյունը, ռեժիմային պահերը, ուսուցման գործընթացը, սննդի բաշխման պրոցեսը, որակը, կալորիականոթյունը, հիգիենիկ պայմանների ապահովումը, երեխաների հետ տարվող անհատական աշխատանքը:

6. <<Հատուցում>> ծրագրի շրջանակներում Արթիկի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ սևծոլյան հանգիստ է կազմակերպվել 7 արթիկիցի ազատամարտիկների, զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամների առողջոթյան պահպանման համար: Համայնքի բյուջեից տրամադրվել է 350 000 ՀՀ դրամ:

Փաստաթղթաշրջանառոթյուն

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 08.01.2019-08.01.2019թթ, քաղաքացիների կողմից համայնքապետարան է մուտքագրվել 936 դիմում, իրավաբանական անձանցից՝ 52 գրոթյուն, գերատեսչոթյուններից, կառավարոթյունից, միջազգային և տեղական կառույցներից՝ 1299 գրոթյուն: Համայնքապետարանից ուղարկվել է 349 գրոթյուն համայնքի ներսում, համայնքից

դուրս՝ 711 գրություն:
Իմ կողմից ընդունվել է 242 կարգադրություն, 449 որոշում:
Տեղի է ունեցել ավագանու 10 նիստ, կայացվել է 62 որոշում:

Արտասահմանյան գործընկերներ

2019 թ-ի ապրիլի 22-28-ը Ֆրանսիայի Հանրապետության քույր քաղաք Վո-ան-Վլեն այցելեց իմ կողմից գլխավորած պատվիրակությունը:

Մեր պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Վո-ան-Վլենի քաղաքապետ տիկին Յելլեն Ժոֆրուայի, հայ-ֆրանսիական մշակութային կենտրոնի ղեկավար Փոլ Շեմեդիկյանի, Լեոնի հայաստանյան հյուպատոսի տեղակալի, Վո-ան-Վլենի քաղաքային խորհրդի անդամների, փոխքաղաքապետերի, Մետրոպոլի պրեզիդենտի, համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների, հայկական եկեղեցու հոգևոր առաջնորդների հետ: Մեր այցը համընկավ Հայոց Ցեղասպանության 104-րդ տարելիցի հետ, ինչի կապակցությամբ Արթիկի քույր քաղաք Վո-ան-Վլենում, ապա Լեոն քաղաքում կազմակերպվել էին Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ:

Մշակութային կյանք

Համաքաղաքային մարզամշակութային միջոցառումների համար համայնքային բյուջեից ուղղվել է 7113200 ՀՀ դրամ:
Տոնացույցում նշված համապետական բոլոր օրերը և հիշատակի օրերը համայնքում նշվել են հավուր պատշաճի, որին մասնակից են դարձել համայնքի և հարակից համայնքների բնակիչներ:

Հունվարի 28 - Հայոց բանակի օր - նշվել է Արթիկի Ս. Մանսուրյանի անվան մշակույթի տանը:

Կանանց միամսյակ – համերգային ցերեկույթներ արտադպրոցական բոլոր կազմակերպություններում:

Ապրիլի 24 – Մեծ Եղեռնի օր - պսակադրման արարողակարգ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշախաչքարի մոտ, «Աշխարհը դժվար է հրաժարվում լռությունից» խորագիրը կրող միջոցառում Արթիկի Վ. Սամուելյանի անվան մշակույթի տանը

Ապրիլի 27 - ՀՀ քաղաքացու օր, բացօթյա համերգային և սպորտային միջոցառումներ համայնքում գործող բոլոր կրթամշակութային և մարզական կազմակերպությունների մասնակցությամբ:

Մայիսի 9 - Հաղթանակի օր - համաքաղաքային երթ, պսակադրման արարողակարգ Արթիկում Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին, համերգային ծրագիր Արթիկի Ս. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնում

Մայիսի 28 - Առաջին Հանրապետության օր, համաքաղաքային վերջին զանգ -

համերգային ծրագիր, շուրջպար
Հունիսի 1 - Երեխաների պաշտպանության միջազգային օր - միջոցառում
Ազատության հրապարակում
Հունիսի 5 - Սահմանադրության օրվան նվիրված միջոցառում Վ. Սամուելյանի
անվան մշակույթի տանը
Սեպտեմբերի 21 - Անկախության օր – համերգային բացօթյա ծրագիր Ազատության
հրապարակում

Արթիկի համայնքապատկան կրթամշակութային կազմակերպություններում կազմակերպվել և անցկացվում են ցերեկույթներ, ընթերցումներ, համերգային, թատերական միջոցառումներ՝ նվիրված Կոմիտասի և Թումանյանի 150-ամյակին, անցկացվել է Տուֆաշխարհի ձմեռ 2019 ամենամյա մարզամշակութային միջոցառումը, Հոլարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա առթիվ միջոցառումներ, 2019 թ-ին միացանք Թանգարանային գիշերներ ակցիային, Անդերսենյան օր, մանկական և պատանեկան գրքի շաբաթ, Տարեցների միջազգային օր, Թատրոնի համաշխարհային օրը, Գիտության և դպրության օրվան, Ուսուցչի օրվան, Մայրենի լեզվի օրվան նվիրված միջոցառումներ, Ասմունքի փառատոն, Սայաթ-Նովայի հիշատակը հավերժացնող տոնը՝ «Վարդատոնը», Կայուն Էներգիայի օրեր, կայացավ Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 6-րդ մրցույթի մրցանակակիրների առաջին միասնական համերգը, «<Այբ> կրթական հիմնադրամի կողմից անցկացվող «Մեղու», «Կենգուրու» և « Ռուսական արջուկ» համահայկական ամենամյա մրցանակաբաշխությունը, Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումը: Ամանորի տոնակատարությունների շրջանակներում կազմակերպվել են տոնական միջոցառումներ համայնքի մշակույթի կենտրոններում, մանկապարտեզներում, ուսումնական բոլոր հաստատություններում: Բոլոր ՀՈԱԿ-ներում բարձր մակարդակով անցկացվել են հաշվետու միջոցառումներ, բաց դասեր, հանդեսներ, ցուցահանդեսներ, համերգներ, վարպետաց դասեր: Արթիկում գործող պարային խմբերը միացան «Արի պարի քոչարի» համահայկական ֆլեշմոբին, Արթիկն իր մասնակցությունն է ունենում հանրապետական և մարզային տարաբնույթ փառատոններում. ինչպիսիք են ՀՀ քաղաքացու օրվան նվիրված Գյումրիում անցկացված «<Արհեստների և արվեստների>> ցուցադրություն-փառատոնը, Ժողովրդական արվեստի հանգույց հիմնադրամի կողմից անցկացված «<Որդեգրված գորգեր>> խորագիրը կրող հաշվետու ցուցահանդեսիը, ինչպիսիք են ՀՀ Անկախության օրվա կապակցությամբ Գյումրի համայնքում անցկացված «<Արվեստների և արհեստների>> ցուցադրություն-փառատոնը, որոնցում Արթիկը ներկայանում էր իր տաղավարներով:

2019 թվականին Տ. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի բեմից «Մեր Մկրտչյան» Արտիստական Թատրոնը արթիկցի հանդիսատեսի դատին հանձնեց «ՏՊ Սիրում Եմ քեզ» ռոմանտիկ դրաման, «Մի կաթիլ հեքիաթ» ներկայացումը, նույն դահլիճում ցուցադրվել են «<Ազնիվ գողեր>>, «Անհայտ բաժանորդ» ֆիլմերը, «<Տիտանիկ նվագախումբը>> ներկայացումը, «<Ես և նա>> սիրային մոնոդրաման, «Հին ու նոր Գյումրի» հումորի երեկոն, «Մատաղիս» ներկայացումը՝ նվիրված Արցախյան և Զառօրյա պատերազմներին, «<Երեք փիսիկները>> շոու ներկայացումը երեխաների համար, Արթիկի պատանի օրինակելի թատրոնը բեմադրել է «Հին լապտերի հեքիաթը» պիեսը, «<Լոռեցի Սաքոն>> պոեմի հիման վրա գրված ներկայացումը, «Շունն ու կատուն» երաժշտախաղ ներկայացումը՝ ժամանակակից մեկնաբանմամբ, Ա. Լինդգրենի «Երկարագուլպա Պեպպիի արկածները» /գեղ. դեկավար՝ Զ.Ավետիսյան/: Արթիկի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում կայացավ ԳՈՀԱԲ երաժշտանոցի շրջանավարտ

Օֆեյյա Գրիգորյանի մենահամերգը, Միրզոյանի անվան 6-րդ մրցույթ-փառատոնի հաղթողների համատեղ համերգը: Արթիկի գեղագիտական դաստիարակության կենտրոնում բեմականացվեց <<Կարմիր գլխարկը>> տիկնիկային ներկայացումը:

- 2019թ-ի ապրիլին Արթիկի Ս. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի վոկալ համույթի սան Նարեկ Պապոյանը մասնակցեց «Արտ Մյուզիք » արվեստի միջազգային X մրցույթ-փառատոնին և արժանացավ 2-րդ կարգի դափնեկրի կոչման:
- Արթիկ Ս. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի «Մանկական օրինակելի թատրոն» թատերախմբը մասնակցեց «Նռան հատիկ» մանկապատանեկան 19-րդ փառատոնին բեմադրությունը՝ Ա. Լինդգրենի «Երկարագուլպա Պեպպիի արկածները» ներկայացմամբ /գեղ. ղեկավար՝ Զ.Ավետիսյան/ և արժանացավ «Լավագույն ներկայացում» անվանակարգին:
- 2019թ-ի հոկտեմբերի 16-ին Արթիկի Ս.Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի վոկալ համույթի ղեկավար Աննա Արշակյանը մասնակցեց «Չվարթնոց» հայ երգի IV մրցույթ- փառատոնի հանրապետական փուլին, որտեղ արժանացավ «Հատուկ մրցանակի»: Այս փառատոնին մասնակցին նաև վոկալ համույթի սաներ Նարեկ Պապոյանն ու Հակոբ Հարությունյանը: Նարեկ Պապոյանը, ով նույն մրցույթ- փառատոնի մարզային փուլում արժանացել էր առաջին կարգի մրցանակի, փառատոնի հանրապետական փուլում «Ժողովրդական երգ» անվանակարգում 2-րդ տարիքային խմբում արժանացավ պատվոգրի՝ 2-րդ տեղ զբաղեցնելու համար , իսկ Հակոբ Հարությունյանը արժանացավ «Հայ երգի զինվոր» խրախուսական մրցանակի:
- 2019թ հունիս ամսին Ս. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի «Վիվաչե» պարային համույթի սաները (գեղ. ղեկ. Անինկա Մանուկյան) մասնակցեցին «Արտ դանս» պարարվեստի հանրապետական առաջին մրցույթ-փառատոնին և արժանացան դիպլոմի՝ «Ժամանակակից պար» անվանակարգում:
- Ս/թ ապրիլին Արթիկի Ս.Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի վոկալ համույթի սան Նարեկ Պապոյանը մասնակցեց «Արտ Մյուզիք » արվեստի միջազգային X մրցույթ-փառատոնին՝ արժանանալով 2-րդ կարգի դափնեկրի կոչման:
- 2019թ. նոյեմբերի 17-ին Արթիկ Ս.Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի «ՎԻՎԱՉԵ» ժամանակակից պարի խմբակի սաները Երևանում մասնակցեցին CRAZY DANCE ստուդիայի կողմից կազմակերպված «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՁ» պարի հանրապետական փառատոնին և արժանացան պատվոգրի՝ մասնակցության համար: Պատվոգրերի արժանացան նաև մշակույթի կենտրոնի տնօրեն Լիլիթ Հարությունյանը և պարային խմբակի գեղարվեստական ղեկավար Անինկա Մանուկյանը՝ համագործակցության և մասնագիտական բարձր որակներ ցուցաբերելու համար:
- Արթիկի Ս.Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի «ՆԱԶԱՆԻ» պարային համույթի սաները Երևանում մասնակցեցին «ԼԻՆԱ» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Տարբեր ազգերի երգեր ու պարեր» ամենանամյա հանրապետական համերգ-փառատոնին: Մեր

սաներն ու խմբակի գեղարվեստական ղեկավար Մարիաննա Սահակյանը արժանացան դիպլոմի և գավաթի՝ փառատոնին մասնակցություն ցուցաբերելու համար :

- Տ. Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի սաներն ապրիլի 28-ին մասնակցեցին Վ.Խանամիրյանի անվան Գյումրու «Վարդևանյան» պարի թատրոնի կողմից կազմակերպված «Պարենք միասին» խորագրով համերգ-պարատոնին: Կենտրոնի սաները լավագույն մասնակցության համար արժանացան պատվոգրի, իսկ պարուսույց Անինկա Մանուկյանը՝ ոչ միայն պատվոգրի արժանացավ, այլ նաև պարգևատրվեց անվանական ոսկե կրծքամեդալով:
- 2019թ-ի հոկտեմբերի 7-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի կողմից «<Արթիկի գրադարան >> ՀՈԱԿ-ի տնօրեն Ալլա Ասոյանը գրադարանային կյանքի աշխուժացման ոլորտում կատարված աշխատանքի համար արժանացել է պատվոգրի:
- Ճապոնիայի Կանակավա քաղաքում անցկացված Բիենալի միջազգային մանկական նկարչական ցուցահանդեսում Արթիկի գեղարվեստի դպրոցի սան Լիլիթ Մարկոսյանը արժանացավ Բիենալի մրցանակի:
- «<Արթիկի գեղարվեստի դպրոցը>> ՀՈԱԿ-ը սույն թվականի ապրիլի 20-ին մասնակցեց «<Ժողովրդական արվեստի Հանգույց>> հիմնադրամի և ԱՄՆ-ի «<Հայկական գորգերի>> միության հետ համատեղ իրականացվող «< Տորքի որդեգրում>> ծրագրի շրջանակներում 2016, 2017, 2018 թվականներին Հայաստանի տասներկու համայնքներում գործված ձեռագործ գորգերի «<Որդեգրված գորգեր>> խորագիրը կրող հաշվետու ցուցահանդեսի բացման արարողությանը: Աշխեն Եղիկյանի աշխատանքը «<Ավանդական դիզայնի լավագույն ստեղծագործություն>> անվանակարգում արժանացավ պատվոգրի:
- Ապրիլի 19-ին Շիրակի մարզային գրադարանում «Թումանյանական ընթերցումներ» մրցույթի ամփոփիչ փուլում Արթիկի գրադարանի ընթերցող Վահե Ավագյանը գրավեց պատվավոր 1-ին տեղը:
- 02.06.2019թ.- ին Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տան գեղանկարչության 10-ը սան իրենց մասնակցությունն ունեցան «<Ետյուդ>> արվեստի հանրապետական մրցույթ-փառատոնին, և ամենակրտսեր սան Ռազմիկ Ալոյանը գրավեց 2-րդ հորիզոնականը, իսկ մյուս մասնակիցները արժանացան պատվոգրերի:
- «<Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի գեղանկարչության խմբակի 12 սաները իրենց մասնակցությունն ունեցան «<Նոր Ձեռքեր>> խորագրով նկարչության և դեկորատիվ - կիրառական արվեստի Հանրապետական 4-րդ մրցույթ-փառատոնին և խմբակի սաներից 12-ն էլ արժանացան 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դափնեկրերի իրենց տարիքային խմբերում:
- «<Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի

գեղանկարչության խմբակի 12 սան իրենց մասնակցությունն ունեցան «Նոր Ձեռքեր» խորագրով նկարչության և դեկորատիվ - կիրառական արվեստի Հանրապետական 4-րդ մրցույթ-փառատոնին և խմբակի սաներից 12-ն էլ արժանացան 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դափնեկրի կոչման իրենց տարիքային խմբերում:

- 09.11.19թ.-ին Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տան ժող. երգի սաները մասնակցեցին "Global-Fest" արվեստի մրցույթ-փառատոնին և խմբակի սան Սուսաննա Նահապետյանը գրավեց 1-ին պատվավոր հորիզոնականը:
- 25.10.2019թ.-ին «Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի գեղանկարչության խմբակի սաները մասնակցեցին Գյումրիում «Ընտանիք» ՄՍԿՊ-ի կազմակերպած Մեծն Կոմիտասի հորեյանական 150-ամյակին նվիրված «Ղողանջ ցնծության» խորագրով կրթամշակութային միջոցառմանը, և խմբակի սան Մարի Սարգսյանը իր տարիքային խմբում գրավեց 1-ին պատվավոր հորիզոնականը «Կոմիտաս» աշխատանքով:
- Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 6-րդ մրցույթում հաղթող ճանաչվեց Արթիկի երաժշտական դպրոցի սան Մերի Առակյանը՝ արժանանալով միաժամանակ երկու մրցանակի. Պատվոգիր՝ կրտսեր խմբում առաջին հորիզոնականը զբաղեցնելու համար և պատվոգիր՝ «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին արժանանալու համար:
- 06.05.19-ին արվեստի «Վերածնունդ» XI միջազգային մրցույթ-փառատոնին «Արթիկի Դ. Ղազարյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ժող. վոկալ անսամբլը «Ազգային երգեցողություն» անվանակարգում արժանացավ Է-ին կարգի մրցանակի: Նույն անվանակարգում հանդես եկող Նարեկ Պապոյանը արժանացավ 3-րդ կարգի մրցանակի «Դաշնամուր» անվանակարգում մասնակցեց խաչատուր խաչատրյանը՝ արժանանալով 3-րդ կարգի մրցանակի (դասատու՝ Գ. Եղոյան):
- «Արտ Մյուզիք» պրոդյուսերական կենտրոնի կողմից կազմակերված «Մեղեդի» երգարվեստի հանրապետական 6-րդ մրցույթ-փառատոնին Արթիկի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցը պատվով ներկայացրեց վոկալ բաժնի աշակերտ Հակոբ Հարությունյանը՝ արժանանալով առաջին կարգի մրցանակի:

Մարզական կյանք

Համայնքային ենթակայության մարզական 3 ՀՈԱԿ-ներում կազմակերպված միջոցառումներով ակտիվացել է նաև մարզական կյանքը: Մարզադպրոցներում մարզվում են ավելի քան 500 մարզիկ: Սպորտի մասայականացման համար ամեն տարի Արթիկի նախկին «Արագած» պիոներական ճամբարի հարակից տարածքում անցկացվում է

<<Տուֆաշխարհի ձմեռ>> ավանդական մարզամշակութային միջոցառումը:

«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթը նույնպես նախադպրոցական տարիքի երեխաների մարզական առօրյայի աշխուժացման լավագույն միջոցառումներից մեկն է դարձել:

2017 թվականից մենք անցկացնում ենք բնօրհամարտի բաց առաջնություն՝ նպատակ հետապնդելով մասսայականացնել բնօրհամարտ սպորտաձևն Արթիկում: Մասնակցություն ցուցաբերած մարզիկներն արժանանում են համայնքի ղեկավարի պատվոգրերի, իսկ հաղթողները՝ մեդալների:

Անցկացվել է <<Քաղաքացու օրվան>> «Անկախության օրվան» նվիրված մարզամշակութային փառատոնները, շախմատի առաջնություններ, Արթիկն իր մասնակցությունն է ունեցել 7-րդ համահայկական ամառային խաղերին:

2019 թվականը աննապաղեպ բարձր էին սպորտային ցուցանիշները:

- Դրնեցկում կայացած <<Ոսկե ձեռնոց>> սպորտային ակումբի 31-ամյակին նվիրված բնօրհամարտի միջազգային մրցաշարում Արթիկը ներկայացնող մարզիկներ՝ Արթուր Մխիթարյանը 52 կգ քաշային կարգում գրավեց պատվավոր 1-ին տեղը, ինչպես նաև պարզևատրվեց լավագույն տեխնիկա ցուցաբերելու համար: Սուրիկ Համբարյանը 66 կգ քաշային կարգում գրավեց 2-րդ տեղը:
- Արթիկի <<Մարզահամալիր>> ՀՈԱԿ-ի սան հինգամյա Դավիթը 1 տոննա 230 կգ կշռող մեքենան հրել է 30 մետր և հայտնվել Հայկական դյուցազնագործում:
- ՌԴ Ստոլրոպոլի մարզի Սուվորովսկ քաղաքում 2019 կայացած բնօրհամարտի միջազգային մրցաշարում՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմին, Արթիկը ներկայացնող 4 բնօրհամարտիկներն էլ իրենց քաշային կարգերում զբաղեցրել են 1-ին տեղերը: Կիսաեզրափակչում՝ Հարություն Խաչատրյանը, իսկ եզրափակչում՝ Ներսիսյան Նարեկը բացահայտ առավելությամբ հաղթանակ են տարել ադրբեջանցի բնօրհամարտիկների նկատմամբ:
- Գյումրիում կայացած ՕՀՊՍ քուլեջի ծանրամարտի պատանիների և դեռահասների բաց առաջնությունում <<Արթիկի մարզահամալիր>> ՀՈԱԿ-ի սաներ Նորիկ Նազարյանը (73կգ քաշային կարգ), Սուրեն Սարոյանը (102 կգ քաշային կարգ), Սևակ Փոստոյանը (40կգ քաշային կարգ) գրավել են 1-ին տեղերը, Սուրեն Ոսկանյանը (67կգ քաշային կարգ), Հոմերոս Հարությունյանը (81կգ քաշային կարգ) գրավել են 3-րդ տեղերը:
- ՀՀ բասկետբոլի պատանիների և աղջիկների 2018-2019 թթ կանոնավոր առաջնությանը <<Արթիկի մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի սաները հանդես եկող մինչև 12 տարեկան պատանիների թիմը դարձավ առաջնության հաղթող, մինչև 14 տարեկան աղջիկների թիմը գրավեց պատվավոր 2-րդ տեղը, մինչև 14 տարեկան պատանիների թիմը նույնպես գրավեց 2-րդ տեղը:
- Կրտսեր տարիքի պատանիների բնօրհամարտի բաց առաջնությունում <<Արթիկի Մարզահամալիր>> ՀՈԱԿ-ի սաներ՝ Հարություն Խաչատրյանը 38.5կգ քաշային կարգում գրավեց I տեղը, Նարեկ Ներսիսյանը 54 կգ քաշային կարգում գրավեց I տեղը, Վան Լևոնյանը 52կգ քաշային կարգում գրավեց II տեղը, Գոռ Ասոյանը 36կգ

քաշային կարգում գրավեց III տեղը, Արսեն Ալեքյանը 41.5կգ քաշային կարգում գրավեց III տեղը:

- 2019 թթ ՅՅ կանանց ֆուտբոլի առաջնության Ա ենթախմբի խաղերում Արթիկի աղջիկների թիմը՝ ԱՖԴ-Յոմենմենը, առաջնության բրոնզակիրն է: Այս մրցաշրջանում մեր թիմի մարզուհին այս առաջնությունն խաղերում ճանաչվել է լավագույն ռմբարկու:
- Արթիկի աղջիկների ֆուտբոլի հավաքականում հանդես եկող 3 մարզուհիները ընդգրկվել են ՅՅ ֆուտբոլի կանանց հավաքականում և հունիսի 28-ից օգոստոսի 7-ը մասնակցել են Բեռլինում կայացած միջազգային մրցաշարին: Արթիկցի ևս 3 մարզուհիներ ՅՅ մինչ 19 տարեկան կանանց ֆուտբոլի հավաքականի կազմում հոկտեմբերին մասնակցեցին Բոսնյա Յերցեգովինայում կայանալիք Եվրոպայի կանանց առաջնության նախընտրական խաղերին:
- Թբիլիսիում մեկնարկած կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում Յայաստանի ներկայացուցիչ՝ 54 կգ քաշային Նարեկ Ներսիսյանը հասավ մինչև 1/4 եզրափակիչ:
- Յայաստանի Բնցքամարտի Ֆեդերացիան Եվրոպական խաղերին մասնակցելու համար հայաստանյան հավաքականի կազմում ընդգրկեց <<Արթիկի մարզահամալիր>> ՅՈԱԿ-ի սան Կորյուն Աստոյանը:
- Յայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Կանանց ֆուտբոլի բաժինը և «Յայ աղջիկների առաջնորդությունը ֆուտբոլում» ՅԿ-ը (GOALS) կազմակերպել էին համատեղ մրցաշար, որի հաղթող դարձավ Շիրակի մարզը ներկայացնող Արթիկի աղջիկների թիմը:
- ՅՅ դպրոցականների հանրապետական 28-րդ մարզական խաղերի ծրագրերով եզրափակիչ փուլի վոլեյբոլի և բասկետբոլի մրցումներում Շիրակի մարզը ներկայացնող <<Արթիկի մարզադպրոց>> ՅՈԱԿ-ի վոլեյբոլի աղջիկների թիմը գրավեց 3-րդ տեղը: Իսկ հունիսի 10-11-ը Դիլիջանում տեղի ունեցավ բասկետբոլի տղաների և աղջիկների եզրափակիչ փուլը: Կրկին Շիրակի մարզը ներկայացնող մեր աղջիկների և տղաների թիմերը համապատասխանորեն գրավեցին պատվավոր 2-րդ և 3-րդ տեղերը:
- Կրտսեր տարիքի պատանիների բնցքամարտի ՅՅ առաջնությունում իրենց մասնակցությունն ունեցան <<Արթիկի մարզահամալիր>> ՅՈԱԿ-ի 5 սան: Արթիկի բնցքամարտիկներից Փիլոսյան Արմենը(40կգ) և Ներսիսյան Նարեկը (54 կգ) իրենց քաշային կարգերում գրավեցին առաջին տեղերը, Լևոնյան Վանը(52 կգ)՝ երրորդ տեղը:
- Դպրոցականների հանրապետական 28-իդ մարզական խաղերի ծրագրով նախատեսված լողափնյա վոլեյբոլի եզրափակիչ մրցումներում Շիրակի մարզը ներկայացնող <<Արթիկի մարզադպրոց>> ՅՈԱԿ-ի աղջիկների վոլեյբոլի թիմը գրավեց 2-րդ տեղը:
- Ստեփանակերտում կայացավ բարերար Լևոն Յայրապետյանի հիշատակին նվիրված բնցքամարտի միջազգային հուշամրցաշար, որտեղ Արթիկի ներկայացուցիչ Սուրիկ Յամբարյանը (70 կգ քաշային) գրավեց առաջին տեղը, իսկ Արթուր Մխիթարյանը (56 կգ քաշային)՝ երկրորդ տեղը:
- Երևանում ընթացող կանանց ֆուտբոլի միջազգային մրցաշարի եզրափակիչ հանդիպմանը, որը կայացավ օգոստոսի 16-ին, Արթիկի <<ԱՖԴ Յոմենմեն>> թիմը հռչակվեց մրցաշարի հաղթող:
-

Օպտիկում ընկերությունն Արթիկում կազմակերպեց և անցկացրեց շախմատի բաց առաջնություն՝ նվիրված Տիգրան Պետրոսյանի 90-ամյակին:

- Ս/թ հոկտեմբերի 17-ից 20-ը Գյումրի քաղաքում կայացավ բնօրգամարտի մանկապատանեկան մարզադպրոցի բաց առաջնություն, մեր մարզիկներ Քրիստինե Թորոսյանը (32 կգ), Ժորա Գրիգորյանը (36 կգ), Յարուշոն Խաչատրյանը (41.5 կգ), Արմեն Փիլոսյանը (44 կգ), Նարեկ Ներսիսյանը (57 կգ), Ռաֆիկ Չարչյանը (80 կգ), Արմեն Թորոսյանը (66 կգ) իրենց քաշային կարգերում գրավել են 1-ին տեղը, իսկ Արագ Լևոնյանը (60 կգ) և Արսեն Ալեքյանը (46 կգ) իրենց քաշային կարգերում գրավել են 2-րդ տեղերը:

**Համայնքի ղեկավարի և համայնքապետարանի գործունեության
հրապարակայնությունը և թափանցիկությունը,
համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը**

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար կազմակերպվել են համայնքապետարանի աշխատակազմի թափուր հաստիքների համար մրցույթներ, աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների:

1. Համայնքն ունի իր պաշտոնական կայքը և ֆեյսբուքյան էջը: Համայնքի ղեկավարի և համայնքապետարանի գործունեությունը հրապարակային է և թափանցիկ բնակչության համար: Արթիկի համայնքապետարանի պաշտոնական տեղեկագրում <http://www.artik.am> պաշտոնական կայքում տեղադրված են համայնքի ղեկավարի ու համայնքապետարանի գործունեությանն առընչվող տեղեկատվություն, որը հասանելի է բոլոր ցանկացողների համար՝ համայնքի ղեկավարի որոշումներ, կարգադրություններ, ավագանու որոշումներ, նիստերի արձանագրություններ, համայնքի բյուջեի պլան և ամենամսյա կատարողականներ, թափուր պաշտոնների վերաբերյալ հայտարարություններ և այլն:

2. Համայնքի ավագանու բոլոր նիստերը, հանրային քննարկումներն առցանց տարբերակով հերարձակվում են <http://www.youtube.com/Արթիկի համայնքապետարան/Artik municipality> սոցիալական ցանցի էջում, ինչի շնորհիվ մեծացել է համայնքի բնակիչների մասնակցությունը ավագանու նիստերին:

3. Համայնքապետի, համայնքային այլ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև համայնքային կյանքում նշանակալի իրադարձությունների վերաբերյալ ազգաբնակչությանը տեղեկատվություն տրամադրելու, կարևոր հարցերի և միջոցառումների վերաբերյալ իրազեկելու համար գործում է Արթիկի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջը (http://www.facebook.com/Արթիկի_համայնքապետարան/Artik_municipality), որի միջոցով մոտ 5000 օգտատեր օպերատիվ կապի մեջ են մեզ հետ: Սրանով ակնկալում ենք իմանալ բնակիչների իրական կարծիքը համայնքային ծառայությունների, համայնքային նշանակության խնդիրների վերաբերյալ: Համայնքի բնակիչներն արձագանքում են լուսաբանումներին, թողնում իրենց կարծիքները մեկնաբանություններում: Ավելի շատ են անձնական նամակները, որոնց անպայման տրվում է պատասխան, իսկ բարձրացված հարցերի համար՝ համապատասխան հանձնարարականներ և լուծումներ:

Համայնքը ներգրավվում է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության վերաբերյալ ծրագրերին՝ նպատակ ունենալով խթանել բնակիչների կողմից խնդիրների վերաբերյալ կարծիքների, առաջարկությունների կամ դժգոհությունների բարձրաձայնումը, ներգրավել նրանց համայնքային որոշումների կայացման գործընթացներում: Բնակչությունը օրենքով սահմանված կարգով իրազեկվում է հանրային լուրերի մասին, մասնակցում և արտահայտում իր առաջարկություններն ու տեսակետները: Կարծում են, բոլորիս ցանկությունն էլ մեկն է՝ ապրել լավ ու բարեկեցիկ պայմաններում, իսկ տեղական իշխանության համար այդ ցանկություններն իրագործելն օրակարգային է: Այդ ամենի իրականացման համար պետք է համախմբենք մեր ջանքերն ու կարողությունները:

